



Օգտակար է իմանալ

- Համակարգչով երկար աշխատելիս օգտակար է ժամանակ առ ժամանակ կարմիր կամ վառ դեղին գույն ունեցող որևէ առարկայի նայել:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համակարգչին առնչվելու անվտանգության պահպանման վերաբերյալ ի՞նչ այլ առաջարկներ ունեք:
2. Ձեր կարծիքով, համակարգչի ո՞ր սարքն է վնասակար առողջության համար:
3. Ինչպիսի՞ն պետք է լինի կեցվածքը համակարգչով աշխատելիս:

§ 2.2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Փորձենք պատկերացնել, թե որևէ խնդիր լուծելու համար ինչ սարքեր պետք է ունենա համակարգիչը: Նույնիսկ ամենահասարակ թվաբանական հաշվարկ իրականացնելու համար համակարգիչը պետք է կարողանա՝

- ա) նախնական տվյալներ ներմուծել,
- բ) պահպանել ներմուծված տվյալները,
- գ) իրականացնել պահանջվող թվաբանական գործողությունները,
- դ) արտածել ստացված արդյունքը:

Այս գործողությունները կատարելու համար համակարգիչը պետք է ունենա ինֆորմացիա *ներմուծելու* և *արտածելու* սարքեր, ներմուծված տվյալները պահպանելու համար նախատեսված *հիշող սարք*, հաշվարկներն իրագործող *թվաբանական սարք* և առանձին սարքերի համակցված աշխատանքը *ղեկավարող սարք*:

Աշխատանքի ընթացքում համակարգչի *թվաբանական* և *ղեկավարող* սարքերն այնքան սերտ են իրար հետ համագործակցում, որ սովորաբար դրանք որպես մեկ ամբողջություն են դիտվում, որն անվանում են *պրոցեսոր*:



Նկ. 2.2-ում պատկերված են անհատական համակարգչի *հիմնական կառուցվածքային սարքերը*:



Նկ. 2.2. Անհատական համակարգչի հիմնական կառուցվածքային բաղադրիչները

Համառոտ ծանոթանալն զրանց նշանակությանը:

Համակարգային բլոկում տեղադրված են համակարգչի աշխատանքն ապահովող կարևորագույն բաղկացուցիչ սարքերը (հիշող սարք, ղեկավարող սարք, թվաբանական սարք և այլն):

Մոնիտորը (դիսփլեյը) նախատեսված է էկրանի վրա ինֆորմացիա արտածելու համար. սա համակարգչի *հիմնական արտածող սարքն է*:

Ստեղնաշարը ինֆորմացիա *ներմուծելու հիմնական սարքն է*:

Մկնիկը օգնում է համակարգչի աշխատանքը կազմակերպել, ինչպես նաև նկարներ, գծագրեր ստեղծել:

Հաջորդ դասերին առավել հանգամանորեն կծանոթանանք ներմուծման, արտածման ու հիշող սարքերին: